

«Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի 2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն

Գործավարություն

2013 թվականի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել են 67 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները:

Համայնքի բնակիչներին տրամադրվել են 634 տեղեկանքներ և բնութագրեր:

Ուղարկվել են 123 պաշտոնական գրություններ մարզի ֆեդերալ կառույցների ղեկավարներին:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 57 որոշում և արձակվել է 13 կարգադրություն:

Ավագանու գործունեություն

2013 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 4 արտահերթ և 6 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի խիստ հրատապ հարցերի քննարկման համար: Մասնավորապես կատարվել են բյուջեի փոփոխություններ և ազատ միջոցների բաշխում:

Գյուղատնտեսական ոլորտ

Գյուղապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին հողօգտագործման աշխատանքներում: Տարվա ընթացքում հանայնքում առկա հողատարածքներն ունեն հետևյալ բաշխումը.

- բնակավայրային նշանակության հողեր՝ 525 հա
- վարելահողեր՝ 372 հա
- խաղողի այգիներ՝ 5.3 հա
- պտղատու այգիներ՝ 0.35 հա

Գյուղատնտեսական աշխատանքները լավ կազմակերպելու համար բարելավվել և հարթեցվել են դաշտամիջյան ճանապարհները, որի համար ծախսվել է 170 հազար դրամ գումար:

Գյուղացիական տնտեսություններին տարվա ընթացքում տրամադրվել է 109 տոննա ազոտական պարարտանյութ:

2013 թվականի ընթացքում արտադրվել է և հանրապետության շուկաներ են հանվել 9106 տոննա բանջարեղեն, 570 տոննա ձնեռուկ, 420 տոննա կարտոֆիլ, 430 տոննա հացահատիկ և շուրջ 100 տոննա խաղող:

Աշնանը համայնքում կատարվել է 117 հա աշնանացան հացահատիկի ցանք:

Անասունների գլխաքանակը 01.01.2014 թվականի դրությամբ

Խոշոր եղջերավոր անասուններ՝ 263 գլուխ, որից՝ կովեր՝ 93 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 59 գլուխ, որից մայրականը՝ 50 գլուխ, խոզերի գլխաքանակը կազմել է 136 գլուխ., որից մայրական կազմը՝ 45, մեղվաընտանիքներ՝ թվով 35:

Քաղաքաշինության բնագավառ

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել գյուղում բնակարանաշինության ոլորտում:

2013 թվականի ընթացքում տրվել է շինարարության 3 թույլտվություն: Վերանորոգվել է գերեզմանատան ջրագիծը, որի համար տրամադրվել է 100000 դրամ գումար: Վերանորոգվել է մայրուղու երկարությամբ ձգվող լուսավորությունը, որի համար ծախսվել է 150000 դրամ գումար:

Հողաշինություն և հողօգտագործման բնագավառ

2013 թվականի ընթացքում կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան:

«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ կատարվել է հողերի հետազոտություն , որի համար տրամադրվել է 100000 դրամ գումար:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

Վերանորոգվել է մայրուղու ասֆալտապատ ճանապարհը, որի համար տրամադրվել է 1000000 դրամ գումար:

Մեծ ուշադրություն է դարձվում գերեզմանատանը հողհատկացման աշխատանքների համար: Այն կատարվում է համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետարանի հանձնարարականի:

Աղբահանության բնագավառ

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան: Այդ աշխատանքների համար հատկացվել է 1400000 դրամ գումար: Աշխատանքները կատարվում են շաբաթական մեկ անգամ:

Մշակույթի և սպորտի բնագավառ

Գործում է ըմբշամարտի խմբակ: Գյուղապետարանը մեծ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում:

Վերջին զանգի կապակցությամբ հատկացվել է 150000 դրամ գումար և այդ գումարով շրջանավարտներին գնվել են նվերներ:

Մանկապարտեզի սաների համար տարեվերջյան հանդեսին հատկացվել է 150000 դրամ գումար և գնվել են գրենակապ պիտույքներ և խաղալիքներ երեխաների համար:

Նոր տարվա կապակցությամբ 870000 դրամ գումար է հատկացվել համայնքի 1-ից 10 տարեկան 370 երեխաներին ամանորյա նվերներ գնելու համար:

Սոցիալական բնագավառ

Գյուղապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել հայրենական մեծ պատերազմի վետերանները, այրիները, արցախյան հերոսամարտի մասնակիցները, նպաստառուները և կենսաթոշակառուները:

2013 թվականի ընթացքում 3690000 դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել, այդ թվում հիվանդ և սոցիալապես անապահով 56 և նորոժին երեխաներ ունեցող 45 ընտանիքների:

Հողի հարկ և գույքահարկ

2013 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 8487.0 դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 100%: 2013 թվականի ընթացքում գույքահարկի գծով բյուջեի եկամուտների մասով գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 3446.4 դրամ գումար, որը կազմում է տարեկան գույքահարկի 98.1%:

Վարձակալական հողերի վարձը 2013 թվականի տարեվերջին կազմել է 905.3 դրամ գումար, իսկ տեղական տուրքերը՝ 82.6 դրամ գումար:

Բյուջեի ծախսերը

Խորոնքի գյուղապետարանը 2013 թվականի ընթացքում կատարել է հետևյալ բյուջետային ծախսերը.

1. Աշխատավարձ-15455.5 դրամ գումար
2. Էներգետիկ ծառայություն և գազ-1420.3 դրամ գումար
3. Կապի ծառայություն - 210.5 դրամ գումար
4. Գործուղում-29.0 դրամ գումար
5. Ապահովագրական ծախսեր-52.0 դրամ գումար
6. Համակարգչային ծառայություն- 128.0 դրամ գումար
7. Տեղեկատվական ծառայություն- 117.6 դրամ գումար
8. Ներկայացուցչական ծախսեր-1169.5 դրամ գումար
9. Ընդհանուր բնույթի ծառայություններ- 1076.2 դրամ գումար
 - որից՝ 1.ծաղկեպսակ-300.0 դրամ գումար
 - 2.դիակառքի ծառայություն-400.0 դրամ գումար
 - 3.այլ բնույթի ծախսեր-376.0 դրամ գումար
10. Մասնագիտական ծառայություն-130.0 դրամ գումար
11. Գրասենյակային նյութեր-300.0 դրամ գումար
12. Տրանսպորտային նյութեր-850.0 դրամ գումար
- 13.Հատուկ նպատակային նյութեր -260.0 դրամ գումար
14. Վարչական սարքավորումներ-1000.0 դրամ գումար
15. Ճանապարհների նորոգում- 1166.0 դրամ գումար
16. Աղբահանում- 1400.0 դրամ գումար
17. Զրամատակարարում- 380.0 դրամ գումար
- 18.Նախագծման արժեք- 3500.0 դրամ գումար
19. Փողոցների լուսավորության ընթացիկ նորոգում-150.0 դրամ գումար

- 20. «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրին. աշխ. -3498.5 դրամ գումար
- 21. Նախադպրոցական ուսուցում-8424.6 դրամ գումար
- 22. Սոցանապահովներ-3700.0 դրամ գումար

Ազգաբնակչություն

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2951 մարդ: 2013 թվականի ընթացքում ծնվել է 37 և մահացել է 16 մարդ:

Ընտանեկան նպաստ ստացողների թիվը կազմում է 36 մարդ , թոշակառուները 275 մարդ:

Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց , որտեղ սովորում է 307 աշակերտ և գործում է մանկապարտեզ՝ 47 երեխայի հաճախումով և 11 աշխատակցով:

Համայնքի հիմնախնդիրներ

ա. համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային ճանապարհների նորոգումը

բ. ամբողջ համայնքի (շուրջ 9 կմ 600մ) ջրագծի կառուցումը , որը համարվում է համայնքի ամենահրատապ հարցերից մեկը, քանի որ ստորգետնյա ջրերի մակարդակը 6-7մ-ով իջել է, իսկ համայնքի բնակչությունն ամբողջովին զբաղված է ջերմոցային տնտեսությունների մշակությամբ:

գ. վերանորոգման կարիք ունեն նաև համայնքի մանկապարտեզը և կուլտուրայի տունը , դպրոցում էլ բացակայում է սպորտդահլիճը:

Խորոնք համայնքի ղեկավար՝



/Ս. Նահապետյան/